

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

ԹՈՎՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍԸՆ

ՄԵՐ ԱՍՏՈՒԱԾԸ

ՎՈԼԹԵՌԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՆԹԱՂԹԵԼԻ ՄԱՀԸ

ՄԵԾ ԴԷՊԻԵՐ ԵՒ ԴԷՄԻԵՐ

ՄՕՐՍ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆ

ՎԵՐ. Ա. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

ՅՐԹՆ. ՄԸՍՐԼԵԱՆ

ՎԵՐ. Ա. ԲԱՍՈՒՆԻ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ՏՈՒԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Կ. ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ

ՕՐ. Ս. ՇՆՈՐՀՕՒԵԱՆ

ՀԵՏԱՔՐԲՐԱԿԱՆ ՆԾԹԵՐ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՉԱՆԻՑԻ ԷՁԸ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԻՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրենք է 150 ղրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չըրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, ղիւրընթեռնի և մաքուր կերպով:

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

Տիար Յովհաննէս Ճէպէճեան (Սուտան) 100 ղրշ. սուր. Տիար Սահակ Շանլեան (Ճիւրուլլուղլի եղբայրներէն) 300 ղրշ. սուր. Տիար Խաչեր Ոսկերիչեանի ձեռքով ատանաբնակ բարեկամներէ 2,200 ղրշ. սուր.:

ՍՄԵՐԻԿԱՅԷՆ ՏՈԼԱՐ ՂՐԿՈՂՆԵՐ

Տիար Յակոբճան Պչագճեան 5, Տիար Կիրակոս Պահարեան 5, Տիկ. Քէչիկեան և Տիկ. Միննէթեան 4, «Րահնիւմա» Օգոս. 16. 1930. 12, (Շարունակելի)

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ Մ'ԵՒՍ

ՄԻ ՄԻԱՅՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱՐՕՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Հայաստանի Կոչնակ-ին տարածման բաղձացող բարեսէր ազգային ձը՝ հաճած է, այս տարի եւս կրկնել իր \$500.00-ի նուէրը. որպէս ղի, մեր կողմէն ալ նայնքան գեղջով մը, 500 հայ կարօտ գաղթականներու գիւրութիւն ընծայուի, թիւթը ստանալու:

ՍԻՐԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ, ՊԱԼԵՍՏԵԱՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐ, ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԿԻՊՐՈՍ գտնուող Հայ կարօտ գաղթականներ պիտի կրնան օգտուիլ այս բացառիկ պատեհութեան, Հայաստանի Կոչնակ-ին բաժանորդագրուելով, ՄԻ ՄԻԱՅՆ 3.00 տուարի, փոխանակ 5.00 տուարի որ սովորական բաժանորդագրինն է:

Ձեզեալ բաժանորդագրինը 3.00 տուար պէտք է ղրկել կանխիկ. Այս գեղջուած գինը պիտի տեսէ կարճ ատեն մը միայն, մինչեւ լրանայ 500 նոր բաժանորդի արձանագրութիւնը:

ՓՈՒԹԱՑԷՔ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻԼ ղեռ քանի փակուած չէ պատեհութիւնը:

THE GOTCHNAG PUBLISHING CO.
331— Fourth Ave., New York, N. Y., U. S. A.

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 21

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Վեր. Ա. Ա. Զիրաճեան այս յօդուածով պատկերացնել կը ցանայ «Նոր Աւետարեւոր» կաթարեւի՛ ծառայութիւնը, նկատի առնելով Սուրիոյ Աւետ. Եկեղեցիները, անոնց պայմանները եւ պահերը: Ուրախութեամբ կը փափայնէ գիտնալ մեր ընթերցողներուն եւ մասնաւոր եկեղեցական, հասարակական ուրիշ առաջնորդներուն եւս տեսակետը այս մասին:

Ծ. ԽԱՐ.

«Նոր Աւետարեւոր» ի առաջին թիւը լոյս տեսաւ 1927 ի Նոյեմբերին մէջ: Սուրիոյ Հայ Աւետ. եկեղեցիներու համաժողովը 1927 ին արդեօք ինչո՞ւ որոշեց «Նոր Աւետարեւոր» անունով թերթի մը հրատարակումը: Սուրիոյ մէջ հրատարակուող հայաթերթերը, մասնաւոր «Բահիւլեմ» եւ «Հ. Կոչնակ» արդեօք մեր պէտքերը չէին գոհացներ: Շատ գոհ ենք «Բահիւլեմ» յէն եւ «Կոչնակ» էն, կը պահատենք եւ կը սիրենք զանոնք: Ուրեմն կը հարցունենք, ի՞նչ է «Նոր Աւետարեւոր» ի դերը:

«Նոր Աւետարեւոր» ընդհանրական թերթ մը չէ. անոր նպատակը քաղաքական, գիտական յօդուածներ հրատարակել չէ: Ուրեմն ի՞նչ է անոր նշանակէտը:

Ա. Սուրիոյ մէջ 10000 հոգիներէ բաղկացեալ Հայ Աւետարանական մարմին մը կայ, որ ներկայիս ունի 23 բնակարան, 3000 երկսեռ աշակերտներ իր դպրոց-

ներուն մէջ՝ 130 հոգինոց ուսուցչական մարմին մը խնամքին տակ, երիտասարդական ընկերակցութիւններ, աւետարանչական եւ ուրիշ գործեր: 2000 ընտանիքներ պարունակող աւետարանական այս մեծ զանգուածը աշխարհի մէջ կողմը ցրուած մեծ թիւով ծանօթներ, բարեկամներ, սիրելիներ, ազգականներ ունի. «Նոր Աւետարեւոր» ի նպատակը ահա այս Աւետ. ընտանիքին ներքին գործերը իրարու իմացնել է, մեր բոլոր եկեղեցիները եւ անհատները իրարու մերձեցնել է՝ իր մէջ թիւին մէջ հրատարակուած եկեղեցական կեանքի քաջալերական եւ տխրազդեցիկ լուրերովը: «Նոր Աւետարեւոր» ի մէջ կը կարգանք շերմեռանդ աղօթածողներու, քարոզներու մարկ ընկու համար եկեղեցիները խոնուող ժողովուրդներու, եկեղեցիներու աւետարանչական գեղեցիկ գործունէութեանց, նոր դարձի եկողներու ուշագրաւ պատմութեանց մասին: Եկեղեցիներու հագեւոր վիճակը մեր աչքերուն առջեւ այնքա՛ն յատակ կերպով կը պարզուի որ կարող կ'ըլլանք գիտնալու թէ որո՞նց, ի՞նչ բաներու, որ եկեղեցիի որ դժուարութեան մասին պիտի աղօթենք:

Բ. «Նոր Աւետարեւոր» Ա. Գիրքը սիրողներուն համար լաւ առաջնորդ մըն է: Անոր մէջ թիւին մէջ կամ իւրաքանչիւր երկու թիւին մէջ անգամ մը Աստուածաշունչի դժուարահասկնալի

հատուածներուն կամ համարներուն մասին կուռ բացատրութիւններ կը տեսնուին: Շատ մը մարդիկ «Նոր Աւետարեբ»ը պիտի առնեն այսպիսի հատուածներու մասին գրուած մեկնութիւնները կարգալու համար:

Գ. Սուրբոյ մէջ տարեկան 5000 Օսմ. ոսկիէ աւելի գումար մը կը ծախսուի մեր նախնական և միջնակարգ դպրոցներուն համար, որոնց մէջ մեր ապագայ յոյսը կազմող 3000 մանչեր և աղջիկներ կրթութիւն և ուսում կ'առնեն: Մեր փափաքն է 10 տարի ետքը առոյգ և մաքուր սերունդ մը տեսնել: «Նոր Աւետարեբ» միւր բոլոր դպրոցներուն մէջ առաջնորդ մըն է, զանոնք իրարու կը ծանօթացնէ: Հալէպի ուսուցիչներն ու վարժուհիները անունով կը ճանչնան Պէյրութի ուսուցչութիւնը:

Ծարապլուտի դպրոցի մասին իրագեկ կը գտնուինք: Դպրոցներու մէջ մանչեր և աղջիկներ «Նոր Աւետարեբ»ի իւրաքանչիւր նոր թիւը ձեռքէ ձեռք կը խլեն ճիշդ իրենց համար և իրենց մասին գրուած մէկուկէս էջը կարգալու համար: Հոն կը կարդան թէ Գըրբգիսանի ամենայնաջող աշակերտը ո՛վ է, թէ Հալէպի Ամերիկեան Աղջկանց Հայ Սնուի մէջ ինչպիսի՛ ճարտարութեանց կը տիրանան աշակերտուհիները, թէ Պէյրութի Ակադեմիային մէջ քանի՛ և ո՛ր քաղաքներէ աշակերտներ կան և ուսուցիչները որո՞նք են, և այլն: Իսկ սակարճ և հետաքրքրական պատմութիւններու էջին համար մանուկները հոգի կուտան. ամէն մանուկ անպատճառ զայն կը կարդայ և եռանդով կը խնդայ:

Դ. Ըսած էինք թէ աշխարհի չորս ծայրերուն ցրուած սրտի հատորներուն ինք, որ ակնդէտ «Նոր Աւետարեբ»ի կ'ապասին իբր բաց նամակ: Անոնք հոն կը կարդան թէ Սուրբիա մնացած իրենց պարագաները ի՞նչ վիճակի մէջ են, ո՛վ մեռած կամ թղջ է, որո՞նք ամուսնա-

ցած են, եկեղեցիները և դպրոցները ի՞նչ վիճակի մէջ են: Անոնք կը կարդան և ուրախութիւն մը կ'զգան: «Նոր Աւետարեբ» մեր բաց նամակն է: Ամերիկա բնակող շատ մը Այնթապցիներու, Մարաշցիներու, Ուրֆացիներու, Խարբիդցիներու, Նոյնիսկ Եէնիճէ Գալացիներու, Օրուլցիներու և Հայնեցիներու մասին միշտ կը լսենք: Վերջապէս «Նոր Աւետարեբ» ինչպէս որ Սուրբոյ Հայ Աւետ. ընտանիքին անդամները իւրարմէ տեղեակ կը պահէ, նոյնպէս ալ աշխարհի չորս կողմերը ցրուած ծանօթները և ազգականները իրարու կը մօտեցնէ և կը սիրցնէ:

Ե. «Նոր Աւետարեբ» միւր նախահայրերուն մասին ալ գեղեցիկ պատմական յօդուածներ կը հրատարակէ, ինչպէս նաեւ Սուրբոյ ոչ-աւետարանական մեր ազգակիցներուն եկեղեցական, կրթական և հասարակական կեանքին մասին լաւ ծանօթութիւններ կուտայ:

Զ. «Նոր Աւետարեբ» ի ուրիշ մէկ էջին վրայ կը տեսնուին աշխարհի հասոյթներուն և սպառումներուն, մարդոց թւին, ծնունդներուն, մահերուն, երկաթուղիներուն, ինքնաշարժներուն, գինուորական և քաղաքային կազմակերպութեանց մասին ամփոփ վիճակագրութիւններ: Ասոնք քիչ տեղ կ'առնեն բայց շատ բան կը սորվեցնեն:

Է. «Նոր Աւետարեբ»ի ռուրիշ մէկ անկիւնը աշտարակութիւն կը գրաւեն անհատներու փրկութեան և աւետարանչական գործունէութեան մասին աւետիսներ, որոնք երաշտ տեղերը սրբառուած ջուրերու կամ ամառը ջուրի եզերքը գտնուող նոճիկներու շուքերուն նման մեր սիրտերը կը զովացնեն:

Ուրախ ենք որ «Նոր Աւետարեբ» ի կարճ, կենսական, և զբաւիչ յօդուածները կ'ուրախացնեն բոլոր բաժանորդները:

Վերջապէս «Նոր Աւետարեբ» այս ան-

ԹՈՎՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍԸՆ

Ա.

Մօտ երեք քառորդ դար առաջ Միւլանի (Օհայօ) հանրային դպրոցին մէջ յետամնաց աշակերտ մըն էր Էտիսըն, այնքան տնայաջող որ ուսուցիչը «բթամիտ» կոչեց զայն։ Սակայն երբ մեռաւ աշխարհի զուր ջանաց թուել Էտիսընի մարդկութեան շնորհած անհամար բարիքները։

Բոլոր քաղաքակիրթ պետութիւնները իրենց ցաւակցութեան բաժինը բերին ի յարգանս Մեծ Բարերարին, որ իր ելեկտրական լամպարով խաւարը ցրուեց և իր ձայնապրովը մթնոլորտը հրաշտաւորեց։

Այսօր այդ «բթամիտ» տղան մարդկութեան անմահ բարերարներէլ ցանկին մէջ դասուելու կ'արժանանայ։

«Էտիսընի մահաւամբ աշխարհս թանկագին զանձէ մը զրկուեցաւ», ըսաւ

ընտանիքին քի՛րքաւսար և քի՛րքաւքեր սուրահանդակն և, անոր շրջիկ այցելուն, ցաւակիցը, գործակիցը, առաջնորդը, ուսուցիչը, սիրոյ կապն է։ Անիկայ մեր ծանօթութեանց շնորհաւանը, մեր զաւակներուն ուրախութիւնն է։ Այս մեծ ընտանիքը կարօտով կ'սպասէ անոր ամէն մէկ թիւին լոյս տեսնելուն։ 2000 ընտանիքներէ 1000ը անոր բաժանորդներն են, նոր պահանջողներ կան։ Ամերիկայէ, Ֆրանսայէ, Յունաստանէ, Եգիպտոսէ, Եթովպիայէ, Արճէնթինայէ եւ ուրիշ երկիրներէ ապսպրանքներ կան։ «Նոր Աւետարեիր» թատանորդները այնչափ կը շատնան որ բաժանորդագիրն կը զեղչուի։ Անոր ամէն մէկ թիւը կարգացողը կարօտով յաջորդ թիւին կը սպասէ։ Ահա այս է «Նոր Աւետարեիր»ը։ Անիկայ չ'ապրի՞ր։

(ՎԵՐ.) Ա. Ա. ՇԻՐԱՃԵԱՆ

նախագահ Հուլի։ «Աշխարհի մեծագոյն բարերարներէն էր այն», ըսաւ Մարքոնի։ «Իր կենդանութեան միջոցին աշխարհս բարեփոխեց և ինչ որ իրագործեց իր յարատեւ ջանքովը, մարդկութեան բարիքին համար էր միայն», ըսաւ Հէնրի Ֆորտ, իր ամէնէն մտերիմ բարեկամը։

Ասանց նման հազարաւոր ցաւակցական միւլանոյն ժամանակագոյն անկան հեռագիրներ զրկուեցան և անհամար խմբագրականներ պրտեցան աշխարհիս ամէն կողմը այս 84 տարեկան ալեհեր ծերունիին մահաւան առթիւ։

Կէս դարու անխոնջ աշխատանքէ մը ետքը, Էտիսըն յաւէտ փակեց իր աչքերը հոկտեմբեր 18, առաւօտեան ժամը 3 ին, շրջապատուած իր սիրելիներով։

Թովմաս Ալվա Էտիսըն Հոլանտական ծագում ունէր և ծնած էր 1847, փետրուար 11ին, Ամերիկայի Միլան քաղաքին մէջ։ Երեք տարի միայն զըպրօցական կեանք մ'ունեցաւ. միշտ զասարանին յետինը ըլլալով ստիպուեցաւ դպրոցը ձգել և մօրը խնամքներուն յանձնուիլ։ Էտիսընին մայրը տիպար տիկին և անձնուէր մայր մը ըլլալէ վատ, դաստիարակ մըն ալ հանդիսացաւ իր զաւակին կրթութեան հոգ տանելով։

Էտիսըն իր յաջողութեան փառապրտակը կը պարտի մօրը յարատեւ ջանքին և ներշնչող հաւատքին։ Օր մը իր մօրը մասին պատմած տառն սպայէս ըսաւ. «Թէպէտեւ դժխեմ մահը շուտով խից ինձմէ իմ անգին մայրս, սակայն անոր թողուցած ազդեցութիւնը խիտ մեծ եղաւ իմ կեանքիս վրայ։ Իր հաստատամտութիւնը, յարատեւ ջանքը և անխախտ հաւատքը զիս յաջողութեան

ճամբու մէջ առաջնորդեցին: Դասա-
րանին մէջ անյաջող էի, միշտ դասա-
րանին վերջինը. հայրս անխելք կար-
ծեց զիս, և իրօք ինծի ալ այնպէս թը-
ւեցաւ: Սակայն մօրս հաւատքը փրկեց
զիս, մայրս եր ուր այսօրուան Էսթրալըն ըս-
տեղծեց իմ մեջս:»

Իր տասը տարեկան հասակին մէջ
մօրը օգնութեամբը սկսաւ յիմիական
փորձեր ընել: Երբ 13 տարեկան եղաւ
ապրուստը շահեղաւ համար թրէնի մը
մէջ սկսաւ թերթ ծախել, միևնոյն ժա-
մանակ կրցաւ իր քիմիական փորձերը
շարունակել իր աղքատիկ աշխատանո-
ցին մէջ, վաճառել մը մէկ անկիւնը: Մշ-
խատասէր մարդը միայն առով չգոհա-
ցաւ, զիր և տպագրութեան մեքենայ
ունեց և պատմութեան մէջ առաջինն ան-
գամ ըլլալով, թրէնին մէջ սկսաւ շա-
ւաթաթերթ մը հրատարակել, որ շու-
տով ունեցաւ 400—500 քաժանորդներ:

Սակայն օր մը, անշուք աշխատանո-
ցին դարակէն լուսածինի (փոսփոր)
չիշ մը գետին ինչպիսի վաճառք աշ-
րեցաւ: Տնօրէնը սատարիկ բարկացած
ըլլալով՝ Էսթրալընի ուժգին չափաւակ մը
կ'իջեցնէ և տղան կը վտարէ: Այս ապ-
տակին հետեւանքը այն եղաւ որ Էսթր-
ալըն մինչեւ կեանքին վերջը խուլ մը-
նաց: Խուլ ըլլալով հանդերձ՝ հնարեց
ձայնագիրը որ ստեղծագործող մտքի մը
կենդանի ապացոյցն է:

Երկար թափառումներէ ետքը հե-
ռագրի պաշտօնեայ մը, որուն գաւազն
Էսթրալըն մահուանէ ազատած էր, հե-
ռագրատան մը մէջ իրեն գործ տուաւ:
Աշխատասէր մարդը հոտաւ սկսաւ իր
փորձերը յառաջ տանիլ: Բայց օրին
մէկը իմացուեցաւ որ Էսթրալըն իր պաշ-
տօնին վրայ ճշգրտապէս չէր, և ատոր
համար պարտադրեցին զինքն որ իւրա-
քանչիւր կէս ժամը անգամ մը հեռա-
գրական մեքենայով նշան մը ընէ ցոյց
տալու համար թէ իր պաշտօնին վրայ է:

Սրաւիտ Էսթրալըն անիւ (1) մը հնարեց
որ այն գործը ճշգրտութեամբ կը կատա-
րէր: Երբ գաղտնիքը հասկցուեցաւ Է-
սթրալըն կրկին արտաքուեցաւ իր պաշ-
տօնէն:

Էսթրալըն յուսահատ վիճակի մը մատ-
նուած, անգործ՝ սկսաւ քաղաքէ քա-
ղաք թափառիլ ապրուստ մը ճարելու
համար: Վերջապէս նիւ Եորք հասնելով
հեռագրատան մը մէջ շատ ճղճիմ ամա-
կանով մը յաջողեցաւ գործ մը գտնել:
Սակայն իր փոքրիկ հնարքներուն շը-
նորհիւ 300 տալար ամսական մը կրցաւ
ծնուք բերել:

Երբ 22 տարեկան եղաւ մեքենայ մը
(tiker) հնարեց, որուն համար ստացաւ
500000 տալար: Էսթրալըն այս դրամով աշ-
խատանոց մը հիմնեց աւելի վարեւոր
գիտեր ընելու համար, և իրօք ալ այդ-
պէս եղաւ: 1869 էն սկսեալ Էսթրալընի
գիւտերը սկսան արագօրէն իրարու յա-
ջորդել՝ որոնց թիւը այսօր 1500ի կը
հասնի:

1878ին Ֆրանսական պիտութիւնը
զայն վարձատրեց իր Պատուոյ Լէգիոնի
շքանշանովը և 1928ին Ամերիկայի իր
Քոնկրէսի ոսկի Մետալովը:

Էսթրալըն իր 52 տարուան բեղմնաւոր
կեանքովը աշխարհիս նորագոյն պա-
մուծեալ լուսատու շահակիրը հանգի-
սացաւ: Անոր կեանքը, իբրեւ իտէալ
կեանքի մը երկարը անպաշտաւ մթաղջ
սերունդներ պիտի ներշնչէ: Թէպէտեւ
իր մարմինը պրոնզէ դադարի մը մէջ
փակուեցաւ, սակայն անիկայ յաւետ
պիտի ապրի երեւոյրով անւերեւան,
ձայնի և լոյսի մէջ:

(Շարունակելի)

Ամերիկեան Պոդհ

Հայկայ

Յ. ՄԱՍՐԼԵՍՆ

(1) Այս անիւը յետոյ հեռագրական կարե-
ւոր գործիք մը եղաւ:

ՄԵՐ ԱՍՏՈՒԱԾԸ

«Աստ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մեկ Տէր է»։ Մարկ. ԺԲ. 29։

Ներկայ դարու բանապաշտներն իսկապէս երկու Աստուած կ'ընդունին. եթէ դաւանութիւնով ալ չէ, լուեկայն աւ գործնականապէս ցոյց կուտան թէ այս սկզբունքի համեմատ կը հաւատան։ Այո, անոնք երկու Աստուած կ'ընդունին. այսինքն մէկը քննութիւնն է կամ նկարագրական տեսչութիւնը, որ ըստ իրենց՝ բուն Աստուածն է. իսկ միւսը՝ իբր թէ անձնաւոր Աստուած մը, զոր Աւետարանէն իրենց գոյց ըրած մէկ բառով թէն Հայր կ'անուանեն, սակայն ստիշատ անգործ և բան մ'ընելու անկարող Աստուած մըն է. այնպէս որ թէն կը սիրէ, կը ցաւի և արցունք ալ կը թափէ, սակայն կարող չէ իր սիրածներն ի հարկին հրաշք գործելով փրկելու, չի կրնար երաշտութենէ տառապող իր ժողովուրդին ազօթքին ու աղաչանքին ի պատասխանի անձրեւ զրկել. չի կրնար վտանգի մէջ եղող իր զաւակները փրկելու համար երկրաշարժը կեցընել, չի կրնար չարիքն արգիլելու համար չարը պատժել։ Նիւթական տիեզերքի ներսիդին այսպէս բանտարկուած ու չզթայուած Աստուած մը, որ անկարող է բնութեան ծանօթ օրէնքներէն տարբեր ու անկախ գործելու, որչափ ալ զինք պաշտողներուն յայտարարութեամբ իբր թէ ամենակարող ըլլայ, սակայն իրապէս ոչ մէկ բանի կարող է. արդհետեւ չի կրնար զոր օրինակ ձգողական ուժին դիմադրել։ Ահա մարդու մտքին հնարք եղող Աստուածն այսպէս է։ Յայտնութեան Աստուածը չէ այսպէս. Անի հրաշքներ գործող Աստուած է։ Մենք Յայտնութեան Աստուծոյն միայն կը հաւատանք և զԱնի կը դաւանինք իբրև մեր երկնաւոր Հայրը։

Աստուած, ընդհանուրէն զատ, մասնաւոր և անհասկալի նախախնամութիւն մըն ալ ունի։ Մատթ. Ժ. 29—31։ Յիսուս չգործածեց «նախախնամութիւն» բառը, քանի որ փիլիսոփայական բառ մըն է այն. բայց և այնպէս այդ բառին արտայայտել ուզած ճշմարտութիւնը սորվեցաւ ամենապարզ և տղետ ժողովուրդին ալ հասկնալի խօսքերով։ Մանկական հաւատքն ահա հոս պէտք է,—Մեծ Աստուածը, որ համայն տիեզերքը կը կառավարէ, անով մէկտեղ չի մոռնար ճնճողակին չափ տկար և անարժէք իր մէկ շնչաւոր արարածն ալ։ Ուրիշն ո՞րչափ անաւել պիտի սիրէ ու հոգայ ամէն մէկ մարդկային էակը։ Վըտանդ կայ արդի ժամանակի հոսանքներուն մէջ այս պարզ հաւատքը կորսնցնելու։ Մենք կը հաւատանք որ Աստուած պատասխան կուտայ ազօթքի և իր զաւակները կը փրկէ ի հարկին հրաշք ալ գործելով, զոր օրինակ երկրաշարժը կեցընելով։ Այս է Յիսուսի վարդապետութիւնը։

Մենք կ'ընդունինք թէ Աստուած բնութեան տուած է իր էութենէն անջատ, իրական գոյութիւն մը։ Ինքը՝ Սկզբնապատճառ ըլլալով հանդիւրձ բնական տիեզերքին մէջ իբրեւ երկրորդական պատճառներ զրած է զօրութիւններ և օրէնքներ, և անոնցմով կը գործէ բնութեան մէջ։ Սակայն այս երկրորդական պատճառներուն գործունէութիւնն Աստուծմէ անկախ չէ. անոնց կառավարութիւնը դարձեալ իր ձեռքին մէջ է։ Աստուած բնութիւնը ժամացոյցի մը պէս լարած և իր վիճակին թողած չէ։ Աստուած այսօր ալ տիեզերքին մէջ կը գործէ, և բնական օրէնքներն Աստուծոյ գործելուն անփոփոխ կերպը կը ցուցնեն։ Բայց այս ըսել չէ թէ Աստուած անպատճառ այդ

անփոփոխ կերպով գործելու ստիպուած է և չի կրնար երբեք անկէ տարբեր ալ գործել: Աստուած ինչպէս որ բարոյապէս էականերուն տուած է ազատ կամքի տէր ըլլալ, զայն հակակշռելու համար հարկ էր որ իր ազատութիւնն ալ պահպանէր: Աստուած թէ՛ ուղղակի նիւթական արեգեքին մէջ գործած է, թէ՛ ալ արեգեքին ու բնութիւնէն պերիվեր. ինչպէս որ մարդուն հոգին ալ մարմինն մէջ գործած ըլլալով հանգերձ, մարմինէն գերիվեր ինքնազրտակից անձ մըն է: Մարդն անգամ կարող է այս աշխարհի մէջ նոր բաներ հնարելու: Ո՛ր մնաց Աստուած, որ ամէն բանի Արարիչն է: Տիեզերքի մէջ մարդն իսկ գերիվեր է բնութեանէն և կրնայ բնութեանէն լաւ շինել. կարելի՞ է որ Աստուած այս մասին մարդէն ստորին ըլլայ: Ասկէ զատ, գիտական և իմաստասիրական ամենանոր հետազոտութիւնները ցոյց կուտան թէ բնութիւնը փակեալ չըլանակ մըն է: Միւս կողմէն, հաւատքը մեզ կ'առաջնորդէ սահմանափակ թէ Արարիչ Աստուած իր անհուն էութեան բոլոր կարելիութիւնները չի կրնար այս մեր գիտած տիեզերքին ծանօթ գորութեանց ու օրէնքներուն մէջ թափած լմնացած ըլլալ: Այնպէս որ, ինչպէս երկրաբանական շրջաններուն մէջ, այսօր ալ կրնայ նորանոր ազդակներ աւերելու անշարհի գորութեան մէջ: Մեր տէրը Յովհ. Ե. 17 ի մէջ շատ յայտնի կ'ուսուցանէ այս ճշմարտութիւնը. «Իմ Հայքս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ»: Ահա մենք այսպիսի Աստուծոյ մը կը հաւատանք:

Քեապ,

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ

ՎՈՒԹԵՌԻ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շարունակութիւն եւ վերջ)

Վոյթէնի արձանն է այս:

Ահա՛ վերջապէս մարդը որուն անունը կապուած է 19-րդ դարու կրօնամարտութեան հետ, մարդը որ կ'ազմակերպուած եկեղեցւոյ կալուածներուն մէջ պայթուցիկ գաղափարներու ուժգնութեամբ, անխնայ ծաղրանքով և խորատիւ թեմամբ բռնատիրութեան, մանաւանդ եկեղեցական բռնապետութեան դէմ, և գերեզման քաշուեցաւ դեռ հեղինակը իր շրթներուն վրայ: Անհաւատը: Աւելի կը մօտենամ իրեն, այս կարմիր մետաղին մէջէն դիտելու համար զինքը:

Առջեւ է ան իր բոլոր հասակովը: Արձանը կ'անհետի աչքէս, ինքն է որ կը պատկերանայ: Իր ժպիտը կը փոխուի հեգնանքի, իր ցուպը կը դառնայ

խորհրդանշի իր յարձակողութեան, քայլը՝ վճռական, և ամբողջ գիրքը կը թողու տպաւորութիւնը մարդու մը որ դատունի աշխարհին դէմ:

Կը դառնամ պատուանդանի արձանագրութեան: Արձանը կ'անգնէր եւ գիւղացիները հանրային հանգանակութեամբ «ինչան երախտագիտութեան»: Ի՞նչ... Ժողովուրդի մը երախտագիտութիւնը սերունդէ սերունդ արթուն պահելու տրժանի գործընթացն է վաւթէն: Եւ կը կարգամ վարի տաքիւրը: Ահա բոլոր առ բոլոր—

Վոյթէն

Նահապետ Ֆէռնիի

Բարերար Ֆէռնիի

Շինել տուաւ 100 է աւելի

Տուներ գիւղացիներուն համար
Գիւղիս տուաւ դպրոց մը,
Հիւանդանոց, աղբիւր մը,
Ջուրի աւաղան և եկեղեցի:
Շրջակայքի համայնքին դրամ
Կուտար առանց տոկոսի:
Երկրին ճահիճները չորցնել տուաւ:
Հաստաբեց տօնավաճառ և շուկայ:
1771ի աղէտին կերակրեց բնակչու-
թիւնը:

Արձանը

Կանգնեցաւ 1890 ին

Նուէր հեղինակէն, Էմիլ:

Շունչս բռնած կանգ կ'առնեմ այս
տողերուն առջեւ մի առ մի: Հիմա
արձանը կենդանացած է, իսկ ես՝ քա-
րացած: Ան կը խօսի ինծի, ես չունիմ
պատասխան: Ձեռն հաւատարմորէն
քին: Ուրեմն ա՛յս Վոլթէոն, «Կրօնքի
թշնամի» Վոլթէոնը ըրած է բոլոր այս
անշահախնդրութիւնները: Յարգանքի
այս կոթողը կանգնող ժողովուրդը Կա-
թոլիկ եկեղեցւոյ ջերմ զաւակն է: Ի՞նչ-
պէս կը գրէ պաշտօնւոր այս տողերը մէ-
կու մը անտան՝ որուն կեանքի գործը
հղաւ նոյն եկեղեցւոյ հեղինակութեան
դէմ պայքարիլ... «Նահապետ» ան-
ունել մէկը որ հայրապետական կար-
գը ծագրեց, զո՞վքը հիւսիլ մէկու մը
որ անհաւատ էր, և գիւղն ալ իր անու-
նովը կոչել...

Արձանագրութեան ոչ մէկ տողը կը
պատշաճի այն Վոլթէոնի որուն պատ-
կերը շինուած է մտքիս մէջ: Իր մասին
ինծի ուրիշ բաներ պատմեր էին: Եր-
բեք չէին ըսած թէ ան իր համայնքին
բարիքին համար զոհեր ունեցած է, ժո-
ղովուրդին առողջութեան միջոցներ ըն-
ծայեց, դաստիարակութիւնը զարգա-
ցուց, հարստութիւնը տուաւ առանց փո-
խարէնի: Դրուագ մ'իսկ չէին պատմած
որ համապատասխանէր այս գրուածի-
քին:

Քանի որ այս մարդը չէր հաւատար,

ուրեմն ինչէ՞ն մղուած ըրած է բոլոր
այս բարիքները որոնք նշանն են միայն
գեղեցկօրէն գործնականացուած կրօն-
քի: Արդեօք այս գիւղացիները իրենց
«Հայրապետին» ին մասին երբեք չէին
լսած աստուածաբաններէն: Բայց ահա
կը գտնեմ որ աստուածաբաններու Վոլ-
թէոն նոյնը չէ Ֆէոնիի Վոլթէոնին հետ:
Եւ ով որ չէ ճանչցած Ֆէոնիի Վոլթէոնը,
չէ ճանչցած զայն երբեք:

Իր արարքներուն արժէքը աւելի մեծ
է անոր համար, որ ինք չէր հաւատար
վարձատրութեան ո՛չ հոս ո՛չ հանդերձ-
եալի մէջ, և ո՛չ ալ թուէր զԱստուած հա-
ճեցնելու կամ Անոր օրէնքը լրացնելու
դրդում: Ի՞նչպէս բացատրել խորագոյն
հաւատքի մը միայն պատշտները եղող
գործերը: Երգուած է ապա կրցածին բո-
լորը առանց ակնկալութեան, առանց փո-
խարինումի, առանց ապագայ վարձա-
տրութեան գաղափարին: Գործադրած
չէ՞ ճիշտ Յիսուսի վարդապետութիւնը:
Ճաբոնացին թեւէս կը քաշէ: Ինք
ձանձրացեր է այդ մետաղը դիտելէ:
«Աճապարենք, ժամը կը մօտենայ»:

Եւ կերթանք կը գտնենք Վոլթէոնի
քնակաբանն ալ: Այժմ թանգարանի մը
վերածուած է ան, և կը ցուցադրուի
միայն այցելուներու: Շրջապատուած է
պարտէզով, ծառաստանով: Բայ եւ իր
սենեակները: «Հոս կ'ուտէր, հոս կ'աշ-
խատէր, սա սենեակը կը ննջէր, սա ա-
ռարկաները կը գործածէր, առնք են իր
աթոռը, գրասեղանը, զրիչը» արագ
կը պատմէ մեզ առաջնորդողը:

Միտքս արձանին վրան է դեռ, երբ
կ'անցնինք եկեղեցւոյ մը առջեւ: Ճա-
կատը գրուած է.

«Վոլթէոն Էրէքսիս Տիէ»

(Վոլթէոն կառոյց Աստուծոյ)

Ոորեմն միայն բարերար իր չէր այս
Վոլթէոնը: Կրօնքը բարեգործութեամբ
չէ փոխարինած: Ունեցեր է նաեւ պաշ-
տող ընդի մը որ ճշարտութեան խորա-

նին առջեւ աղօթքի կը կենար, իր դուռները փակած: Ճանչցած է ուրեւի՛ր Աստուածը, որուն հետ առանձնանալու համար չիներ է յատուկ մատուռ մը:

Ներս կը մտնենք: Եթէ Վոլթէռը հոն տեսնէի, արդեօք իրմէ ներդուլթիւն պիտի խնդրէի՞ որ առանց իսկապէս ճանչցած ըլլալու դատապարտած եմ զինքը:

Բայց հարկ չկար Վոլթէռի օրինակը պատմելու այսքան հրկաքօրէն: Մեր շուրջը ամէն օր մարդիկ կը դատապարտենք, առանց զանոնք հասկնալու, առանց ճանչնալու: Ամէն օր մեր չափանիշները առած կը պտըտինք հրապարակներու վրայ՝ մեր նմաններուն դատաստանը ընելու, ամէն օր կը դատապարտենք զանոնք որ մեր՝ կաղապարին մեջ չեն մտնիր, ամէն օր ամէն տեղ վճիռներ կ'արձակենք թէ ո՞վ է ուղղափառը, ո՞վ է հաւատարմը, ո՞վ ընտրեալը, և ո՞վ մոլորեալը, անհաւատը, դժոխականը:

Եւ մեր դատաստանները ա՛յնքան անողոք են որքան զօրաւոր է մեր տղիտութիւնը նիթակային մասին: Կը դատապարտենք մարդիկ, կը դատապարտենք հաստատութիւններ, գաղափարներ, շարժումներ, միշտ եւսփրա կախելով մեր զոհերու վիզէն: Եւ 99 առ հարիւր մեր դատապարտածները կը ճանչնանք միայն անունով, ո՛չ իսկութիւնով:

Կը դատապարտենք որովհետեւ չենք հասկնար զիրենք: Կը խաչենք որով-

հետեւ չենք ճանչնար: Միշտ պատրաստ ենք քարկոծելու, կամ գէթ քարկոծողներուն վերարկուներուն հսկելու, բայց երբե՛ք քարկոծողը հասկնալու նախու: Կը քարկոծենք որովհետեւ դիւրին է քարկոծելը. բայց հասկնալը... կը դատապարտենք, որովհետեւ ան մեզի պատրանքը կուտայ մեծութեան, կը փառսէ մեզի որ վերջապէս մենք ալ բաւական զարգացած ու կարող ենք դատելու: — The inferiority complex destorted into self-assertion!

Մեզի ըսուեցաւ «Մի՛ դատէք...» իսկ մենք կը դատենք, որպէսզի մեր թշուառ տգիտութիւնը մերկանայ եւ մեր վրայ Աստուծոյ դատաստանը ըլլայ աւելի ահաւոր:

Հոս Վոլթէռը մոռցած ենք: Իր դատապարտութեան պարագան չէ որ կը քննենք: Այլ կը խօսինք բոլոր մարդկութեան մէջ տարածուած մեղքի մը մասին: —

Դատել առանց հասկնալու:

Խաչել առանց ճանչնալու:

Թող ըլլայ հրապարակներուն վրայ ամէնէն շատ դատապարտուած անձը, կամ զազափարը, կամ հաստատութիւնը, կամ շարժումը, պէտք չէ դատապարտենք առանց հասկնալու թէ ի՞նչ բան ըսել կ'ուզէ ան, և առանց ճանչնալու թէ ի՞նչ բան է ան իսկօրէն: Որովհետեւ ամենքն ալ անկասկած թան մըն եւն ու թան մը ըսել կ'ուզեն:

Այսպէս, կարելի է սորվիլ դաս մըն ալ նոյնիսկ Վոլթէռէն:

Բ. Մ. ԵՂԻԱՅԱՆ

ԱՆՅԱՂԹԵԼԻ ՄԱՀԸ

Դրեց՝ ՏՈԹԻ. Ա. ԱՊՈԻՀԱՅԱՆԹԵԱՆ

Բոլոր աշխարհ կ'ատէ մահը: Սպանիոյ մայրաքաղաքը Մատրիտի գեղաբուստական պարտէզներէն մէկուն

մէջ սուրբի մը արձանը կը գտնուի. որուն վիզէն խիստ թանկարժէք մարդարիտ և ազամանդներով մանուկ մը

կախուած է: Յարդ բնաւ չէ գող-
ցուած, և ո՛չ մէկը կ'ուզէ ունենալ
դայն: Բանդի ըստ աւանդութեան ով
որ դայն գործածէ պիտի մեռնի ան-
շուշտ:

Մեր ծնած վայրկեանէն կը սկսինք
մեռնիլ: Վերջը օղակուած է սկիզբին:
Մահը մըշտ կայ, ու կը մնայ միշտ ան-
խուսափելի: Ոմանք դող կ'ենեն մա-
հուան առջեւ, կ'ուզեն չտեսնել դայն,
թմրիլ և գինովնալ կ'ուզեն՝ երեսը չը
տեսնելու համար: Իսկ ոմանք Մարիա
Թերեզայի նման մեռնելու վայրկեանին
կը մերժեն բժիշկներու թմրեցուցիչ
մօրֆինը ըսելով՝ «Թողէ՛ք զիս, բաց
աչքերով մեկնիմ իմ Աստուծոյս:

Արեւ և աստղերը չափող և կշռող
հզօր մարդը՝ գոյնը կը նկատէ, իր լեզուն
կը կապուի, սարսուռներու քրտինքներ
կը թափէ այդ անլուծելի առեղծուածին
առջեւ: Աշխարհը իր մէջ բովանդակել
չկրցող մեծ անձեր մանկան պէս անզօր
կը մնան և լուսթեան կը դատապար-
տուին մահուան առջեւ և անձայն կ'իջ-
նեն սահմանափակ փոսի մը մէջ:

Աշխարհը՝ իրենց մտային ոյժովն ու
տաղանդովը յեղաշրջող դիւցազներ ու-
ժասպառ կ'իյնան մահուան ճիրաննե-
րուն մէջ:

Կաթիլ մը ջուր, ասեղ մը, աւազի
հատիկ մը, փուշ մը, փոքրիկ գնդակ
մը կրնայ մեռցնել մարդը:

Վարդ, շուշան, հաւ ու ծաղիկներ
կը մեռնին, կը մեռնին նաեւ մեր կեան-
քը կազմող վայրկեանները, օրերն ու
տարիները: Մարդ կը յաղթէ բնու-
թեան մէջ գրեթէ ամէն բանի, ի բաց
առեալ ինքզինքին ու մահուան: Ուէյլ-
լի իշխանը Ֆրէտէրիք Լուիզ մեռաւ
կրիքէզի գնդակի մը հարուածէն միայն:
Լուի վեցերորդ մեռաւ որովհետեւ խոզ
մը անցաւ իր հեծած ձիուն փորին տա-
կէն: Փապիլոն Հոովմէսկան ատենակա-
լը խեղդամահ եղաւ միայն մէկ հատիկ

այծի մազէ մը որ գտնուեցաւ իր խմած
կաթին մէջ: Օդուէյ բանաստեղծը սո-
վամահ ըլլալու միջոցին ոսկի մը տըր-
ուեցաւ իրեն, անով գնուած հացի ա-
ռաջին պատառը կոկորդը մնալով խեղ-
դուեցաւ: Ուիլիսմ երրորդ մեռաւ,
ձին խուրդի հողակոյտի մը վրայ գայ-
թելուն պատճառաւ: Նաբոլէօն աքսո-
րի մէջ մեռաւ: Սկուլտիոյ Մէյրի թա-
գուհին զլխատուեցաւ իր ազգականու-
հին էլիզապէթի կողմէ: Մեծն Լինքըն
չնչին գնդակով մը մեռցուեցաւ: Յի-
սուս անարգ աւազակի խաչին վրայ ա-
ւանդեց հոգին:

Յաճախ ըսուած է թէ՛ մարդս մա-
հէն աւելի մեռնելէ կը վախնայ, եթէ
երբեք մարդս գիտնայ թէ ինչ կերպ
պիտի ըլլայ իրեն վերջաւորութիւնը,
և այդ մասին ծրագիր մը կարգադրէ
թերեւս այնքան չսարսափի պալիք այդ
մութ դժբաղդ գէպէն:

Ըսուած է թէ մահը՝ բնութեան
պարտքը կը վճարէ: Անոնք որոնք
լաւ ապրած են կը ներկայացնեն մաշած
աղատած թղթադրամ մը պարտավճա-
րումի համար, ընդունելով փոխարժէքը
ոսկի, ընդունելով՝ տաղտկալի և հի-
ւանդատ մարմնոյ մը տեղ՝ առողջութիւն
և կեանք:

Հանրի Ուօրտ Պիչըր ըսած է. «Կըր-
նաս թագաւոր մը ապրած ըլլալ, բայց
կը մեռնիս որպէս մարդ մը»: Մահը՝
մեծ հաւասարեցնող մըն է, մեռնելով
ամէնքս կը ուսմկավարանանք:

Էլիզապէթ Թագուհին էր որ մեռնե-
լու պահուն բացագանչեց, խոստանա-
լով մէկ միլիոն սթէրլինկ միայն մէկ
րոպէ ժամանակի մը համար:

Ըսուած է թէ Մեծն Աղեքսանդր օր
մը պատահած ըլլալով շնական փրկիսո-
փաներէն Դիոգլինէսի որ կայտ մը ոս-
կորներու հետ կը խաղար, «Ի՞նչ կ'ընես
հոս» կը հարցնէ: Մեծն Աղեքսանդրի
Դիոգլինէս կը պատասխանէ «Հօրդ ոս-

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԵԾ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԴԷՄՔԵՐ

3. ՄՈՎՍԷՍ

Մովսէս Ն. Ք. 1275 թուականին, Եգիպտոսի մէջ ապրող խեղճ, անտէր, ազէտ եւ պնդուր չարչարանքներու, խժոժողութիւններու առկա բնաշնչումի դատաւարանուած ժողովուրդը փարաւտներու հօր ձեռքերէն ազատելով՝ Քանանու հրկրը բերաւ, Պաղեստինի մէջ ձեռնծալի պատմութիւնն ունեցող ազգ մը յառաջ բերաւ, որ համաշխարհային քաղաքակրթութեան բարձրացումին մէջ մեծ բաժին ունեցաւ: Իր կերտած ազգն է որ Աշխարհիս տուաւ Սոփիա Գիրքը, Աստուածաշունչը, Դարձեալ Մովսէս էր որ տիեզերական, անսկիզբ, յաւիտենական մէկ Արարչին, մէկ Արարչու զոյսութիւնը քարոզող եւ րէք կթօնքներու ծագումին պատճառ եղաւ: Այս մեծ օրէնսդիրն է որ այժմու քաղաքակրթ ազգերու օրէնքներուն մէջէն տակաւին կը խօսի: Եթէ այս մեծ պատմաբանը, այս արդարադատ դատաւորը, այս մեծ սպարապետը այս հեղ եւ խոնարհաբարոյ տիկտաղորը ծնած չ'ըլլար, քաղաքակրթութեան հոսանքները տարբեր ուղղութիւն պիտի առնէին եւ մարդկային ընկերութիւնը երկնային ամենամեծ օրհնութիւններէն զուրկ պիտի մնար:

4. ՄԵԾՆ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ, ԱՍՈՐԵՍ-ՏԱՆԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ, ԴԷՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԵԿԻՊՏՈՍ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Ն. Ք. 700 ին, Ասորեստանի ռազմագէտ միապետը՝ մեծ եւ դիւցազնական բանակի մը գլուխը անցած արշաւեց

դէպի Սուրիա, զայն գրաւելէն վերջ՝ յառաջացաւ Պաղեստին եւ Երուսաղէմէ զատ բոլոր Յուդայի երկրին քաղաքները նուաճեց եւ Երուսաղէմն ալ քաջարի գոռոգերով պաշարեց: Իրեն համար յաղթութիւնը անկասկած էր, այս գոռոգ թագաւորին նպատակն էր Երուսաղէմը մէկ հարուածով նուաճելէն յետոյ երթալ եւ նախախնամութեամբ սահմանաւ թուականէն առաջ տապալել բուրգերու կայսրութիւնը եւ քարուքանդ ընել այն փառաւոր Եգիպտոսը, որ կը ծառայէր օգտակարապէս իբրեւ համալսարան այն նորակազմ ազգերուն՝ որ կը բնակէին Միջերկրական ծովու եզերքը: Բայց աւա՜ղ, զօրութիւն մը չկար այս ամբարտաւան ինքնակալը ետ դարձնելու:

Եգիպտոսի դռները դեռ չհասած՝ երկնային ազէտ մը Ասորեստանցի Սարգոնի այս հպարտ որդւոյն բանակին մէջ 180 հազար զօրք կոտորեց եւ ինքը ստիպուեցաւ Երուսաղէմի պաշարումը վերցնել եւ ամօթով եւ տխուր վերադառնալ իր մայրաքաղաքը, եւ երբ իր աստուծոյն տաճարին մէջ կ'աղօթէր (կարելի է նորէն արշաւանքի ծրագիրներ կը մտածէր) իր երկու որդիներէն սպաննուեցաւ եւ իր բոլոր ռազմավարական ծրագիրները իրեն հետ մէկտեղ գերեզմանը իջան եւ մարդկային քաղաքակրթութիւնը մեծ փորձանքէ ազատեցաւ:

Եգիկիէլի ջերմեռանդ աղօթքը եւ Եսայիի զօրաւոր հաւատքը ազգաց պատմութեանց մէջ մեծ փոփոխութիւն յառաջ բերաւ:

5. ԿԻՒՐՈՍ ԵՒ ԱՆՈՐ ՄԱՀԸ

Կորները կը լինտուեմ, բայց հօրդ եւ գերիներու խնդրներուն մէջ տարբերութիւն մը չեմ գտներ:»

Ն. Ք. 558, Մարաց Կայսրութեան հպատակ փոքրիկ Պարսկաստանի իշխանական աթոռը նստաւ Կիւրոս անուն

իշխան մը. որ պատերազմական հան-
ճար մըն էր: Իր առաջին օրերուն Մա-
րաց պետութեան լուծը թօթափեց և
անկախ ըլլալէն վերջը մէկ հարուածով
Մարաց թագաւորութիւնը տապալելով
անոր զահը նստաւ: Շատ ժամանակ
չ'անցաւ, այն դարու երկու հզօր և մեծ
տէրութիւնները, Բարեւոն և Լիզիա,
բաւոյնովին զրաւելով անոնց անուննե-
րը աշխարհիս քարտէսէն վերցուց: Հը-
րէից ազգը Բարեւոնի գերութենէն ա-
զատելով իրենց հայրենիքը վերադար-
ձուց: Վերջապէս կարճ ժամանակամի-
ջոցին մէջ, Հնդկաստանի դռներէն մին-
չեւ Տարսանէլ և Կովկասի լեռները մին-
չեւ Սուէզի Պարանոցը երկարող լայնա-
տարած կայսրութեան մը տէր դարձաւ:

Կիւրոսի կեանքը, քաջագործու-
թիւնները և յաղթանակները մարդ-
կային ազգի, ընդհանուր քաղաքակը-
թութեան և երկնաւոր թագաւորու-
թեան օգտակար եղած են: Քանզի Հը-
րէից ազգը և կրօնքը ոչնչացումէ ազա-
տեց, Մարաց, Լիզիայի և մանաւանդ
Բարեւոնի այլեւս փտտած և նեխած
քաղաքակրթութիւնները վերցուց: Բայց
անոր մահն ալ աշխարհի օգտակար ե-
ղաւ: Քանզի Կիւրոս մեծ, հանճարեղ
պատերազմիկ մը, զիւցալիական ռազ-
մագէտ մը և յաղթանակներով չյագե-
ցող փառամոլ ինքնակալ մըն էր: Եթէ
Յունա-Պարսկական մեծ պատերազմը
Կիւրոսի ժառանգակ Թաքսար ըլլար շատ
հաւանական էր որ ան Պարսկական բա-
նակներու փառաւոր յաղթանակներով
պիտի վերջանար: Իր վերջին տարւոյն
մէջ, երբ տախլաին ծերացած չէր, Կով-
կասեան Լեռնագաւառին մէջ ապրող ըՍ-
կիւթացիներու վրայ պատերազմ հրա-
տարակեց, անոնք շատ մը քաղաքները
առաւ, կ'ուզէր այս տէրութիւնն ալ ար-
մատախիլ ընել: Բայց օր մը գիշերանց
սաստիկ ճակատամարտի մէջ իրաւոր-
ուեցաւ և ձիէն ինկաւ և կասեցած թըշ-

նամի զինուորներէն սպաննուեցաւ և
իր բոլոր պատերազմական խաչալները
իրեն հետ թաղուեցան:

Եթէ Կիւրոսի կեանքը աւելի երկար
լինէր, ով գիտէ շատ հաւանական էր որ
Վոսփորի նեղուցէն անցնելով Յունաս-
տանի վրայ պիտի յարձակէր Հելլէնե-
րու ընտիր քաղաքակրթութիւնը խոր-
տակելէն վերջը, կարելի է մինչեւ Հը-
սոսով պիտի արշաւէր և Լատիններու
նորադոյր լեզու քաղաքակրթութիւնը պի-
տի ոչնչացնէր: Ո՞վ գիտէ, ... Կաւի
քանի տարիներ Եւրոպա և Արեւմու-
տեան քաղաքակրթութիւնը պիտի մը-
նար կրակապաշտներու բռնակալու-
թեան տակ, և այն ատեն ի՞նչ պիտի ըլ-
լար մարդկային ընկերութեան ճակա-
սագիրը:

ՇԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Ամերիկայի Նախագատմական Մայիս
Հնդիկներուն մանուկի մը գերեզմանին
մէջ ձայն հանող պուպրիկի նախամի-
պօրը գտնուած է:

Սառուցեալ գօտիի ծիծառները թըռ-
չուններու մէջ երկար ճամբորդութեան
ախոյեանութիւնը շահած են, անոնցմէ
ամենք իրենց տարեկան գաղթումի մի-
ջոցին 22,000 մղոն կը ճամբորդեն:

Երկրիս մթնոլորտը 56,328 անգամ
10 հազար միլիոն թօնօ կը կշռէ:

Փարաւոն տիտղոսը, զոր Եգիպտոսի
Թագաւորները կը կրէին՝ «մեծ պետու-
թիւն»ը նշանակող բառէ մը շինուած է:

Ֆլորիտայի մէկ ճահիճին մէջ կրիտ
մը գտնուած է որ երկու վիզ և երկու
գլուխ ունի, չորս առջեւի իսկ երկու ե-
տեւի ոտքեր, մէկ ստամոքս և մէկ թոք
ունի. երկու գլուխներ երբ տարբեր
ուղղութեամբ շարժիլ կը փափաքին:

կամ միեւնոյն մէկ որսը իւրացնել կը փափաքին սոսկալի պայքարի մը կը մը-
ղուին իրարու հետ :

1931 ի առաջին վեց ամիսներու մի-
միջոցին Մ. Նահանգաց 5 մեծագոյն
քաղաքներուն մէջ 200 միլիոն տոլար
նպաստ տրուած է : Եւ բոլոր երկրին
մէջ գոլէճներուն նուիրուած է 100 միլ-
իոն տոլար : Եւ ասիկայ հակառակ տըն-
տեսական տագնապին :

Գամերունի քրիստոնեայ նիկրսները
շտեղով ու տնտեսական տագնապի մէջ է
Ամերիկան , իրենց մէջ 3 տոլար 17 սէնթ
ժողովելով Նիւ Եորքի երիցական Պորտին
կը զրկեն «սովամահ Ամերիկացիներու»
օգնելու համար :

Գերման հնարիչ մը նոր վառօթ
պատրաստած է , որուն շնորհիւ սովո-
րակոն հրացանէ մը արձակուած գնդա-
կին արագութիւնը մէկ երկվայրկեանի
մէջ 2500 (որ ներկայ միջին արագու-
թիւնն է) ոտքէն 5650 ոտքի կը բարձ-
րացնէ : Այս վառօթին գործածու-
թեամբ 150 ոտք հեռաւորութենէ ար-
ձակուած գնդակ մը կէս մատնաչափ
թանձր մետաղէ տախտակը ծակած է :

Մօտ դար մը առաջ , 1860 ին Մ. Նա-
հանգաց ժողովուրդին միայն հարիւրին
երեքը քաղաքներու մէջ կ'ապրէր :

Ճարտնի մէջ միջին հաշուով օրը 4
երկրաշարժներ տեղի կ'ունենան բայց
միայն 7 տարին անգամ մը սաստիկ
շարժ մը կը պատահի :

Աքուլինիկում հռովմէական քաղա-
քին մէջ Բ. Ա. երկրորդ դարէն մնացած
երգեհոն մը գտնուած է , պղինձէ սաեղ-
նաշարով եւ արծաթէ փողերով :

Միացեալ Նահանգաց մէջ 1942 կոյր-
համբեր կան :

Կատարուած վիճակագրութեան մը
համեմատ այրեքէն երկու տարի աւելի
կ'ապրին կիները , որոնք թէպէտ աւելի
մարմնական թերութիւններ կ'ունենան
եւ աւելի յաճախ կը հիւանդանան :

Հին Բաբելոն քաղաքը երեք եւ չորս
յարկ բարձր շէնքեր ունէր :

Ընդծովեայ հեռադրական թեկերու
համագումար երկարութիւնը 345000 ծո-
վային մղոն է :

Կատարեալագէտ մօթ սենեակի մը
մէջ եթէ շաքարի երկու կտորներ իրա-
րու շփուին տկար լոյս մը կ'արտադրեն :

Հին Կիպրոսի մէջ պղինձէ սաները
իբր գրամ կը գործածուէին :

Անգլիոյ մէջ գիտունները , 1918 ին ,
ձուկերու տարածի աւանատես հղան ,
երբ ծովու վրայ թաթառի մը միջոցաւ
փոքր ձուկերու վտառ մը օդը բարձրա-
ցաւ եւ ապա սաստիկ հով մը զանոնք
ցամաքէն ներս տանելով հողի վրայ ձը-
գեց :

Գիտունները կը գուշակեն թէ 2000
տարուան միջոցին մեծ սառնարանե-
րու դարը պիտի վերադառնայ :

ՄՕՐՄ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆ

Առկէ 68 տարիներ առաջ հայրս քա-
րոզական պաշտօն կը վարէր Ճիպլինի
մէջ : Մայրս ալ հոն երկտասարդ կլինե-
րը եւ տղաները իր շուրջը հաւաքելով
դաս կուտար ա , բ , գ , է սկսեալ : Իր
աշակերտներէն մէկը 84 տարեկան կին
մ'էր զոր թխղիկ գառը կը կոչէին , իր իս-
կական անունը , սակայն , Թուրկ պէտք
է հղած ըլլայ : Կինը թէեւ շատ տարի-
քոտ էր բայց տակաւին առոյգ էր , ու-
ղիղը , աչքը եւ ընդհանուր ֆիզիքակա-
նը առողջ էր : Այս կինը մեծ ճիգով եւ

դժուարութիւններով սկսաւ Ս. Դերբը կարգաւ առանց քաջութեամբ իրմէ աւելի լաւ կարգաւ գիտցողներուն օգնութիւնը կը խնդրէր և բառերը կը կրկնէր:

Թիւտիկ Դարը բաւական երկար ապրեցաւ: 1895 ի հայկական մեծ ջարդին խառնուած մէջէն մի քանի Թուրքեր այս կնոջ տունը կը յարձակին, և իրեն մօտենալով կ'ըսեն. «Հատէ, տեսնանք, անունդ փոխէ. ի՞նչ անուն կ'ազնայ» Աւելցարդ կինը սապէս կը պատասխանէ. «Ձեռքդ անունս փոխել, երբեք չեմ ուզիր նոր անուն մ'առնել: Զաւակներս, իմ անունս շատոնց գրուած է գոր փոխելու պէտք չկայ: Մինչև հիմա իմ պաշտած Տէր Յիսուսիս ի՞նչ ծառայութիւն մատուցի որ 114 տարիքս ետքը նոր կրօնքի մը հետեւիմ»: Թուրքերը ասոր վրայ, բարկանալով կ'սկսին չորս կողմը պրպտել ըսելով, «ու՛ր է, ու՛ր է ասոր գիրքը գոր գիշեր ցերեկ քթին վերայ ափնոց դրած կը կարդաք, պէտք է գտնել և այրել այդ գիրքը, որուն ինք վստահած էր, որ իր խելքը գլուխը գայ»:

— «Կրնաք գիրքս այրել, բայց չէք կրնար սրտիս մէջ անոր ազդեցութիւնը ոչընչացնել, կը պատասխանէ կինը:

— Ծատ լաւ, բայց եթէ քեզ սպաննե՞նք:

— Ես կորուստ մը չեմ տեսնար, կը շարունակէ անյողողող կինը, ժամ առաջ սիրելի Ուստոցիչիս քովը կ'երթամ, որ ինձի կը սորվեցնէ հազար ու մէկ դասերը, գոր հոս չկրցայ սորվիլ:

Ահա այս կիրպով այս կինը կը յաղթանակէ և իր անկեղծ հաւատքը կը յայտնէ:

(Օր.) Ս. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ

ՄԱՅՐԻԿ ՊԱՃԸ ՊԵՋՃԵԱՆԻ ՄԱՀԸ

Մայրիկ բաճի 1863ին ծնած է Այնթապ, Պիւլպիւլեան ընտանիքի մէջ. վեր. Յակոբ Պիւլպիւլեանի քոյրն էր: 1882ին կ'ամուսնանայ Տոքթ. Յ. Պէզճեանի հետ: Մի քանի տարի ետքը այս նոր ընտանիքը կը հաստատուի Պէյլան: Ունեցած են 4 մանչ և աղջիկ զաւակներ, որոնք՝ բացի մէկէն՝ ողջ են:

Մայրիկ բաճը Պէյլանէն Աղէքսանդրէթ կ'իջնայ և իր դուստրը Տիկ. Վահիտէ Աւետիքեանի տունը հիւր կ'ըլլայ: Նոյն օրը կարգ մը բարեկամները կ'այցելէ, և իրիկուան մօտ մինչ այցելութենէ մը կը վերադառնար Երախ մէջ անհանգստութիւն կ'զգայ: Տիկ. Պէզճեան արդէն սրտի հիւանդութիւն ունէր: Փողոցի մէջ տեղ մը կը կռթնի քիչ մը հանգչելու համար, բայց անհանգստութիւնը կը զօրանայ և ինք գետին կ'իյնայ: Ետքը գտնուողներու բոլոր օգնութիւնները անօգուտ կ'անցնին: Մայրիկ բաճին կ'սկսի Յիսուս, Յիսուս աղաղակել: Զաւակը Տիար Լուտիկ Պէզճեան և ուրիշ բարեկամներ կը հասնին, բայց զինքը կառքի մը մէջ չգրած ան իր վերջին շունչը կը տանդէ:

Հետեւեալ օրը կատարուեցաւ յուղարկաւորութիւնը: Պատ. Գ. Թումանեան, Գըրըզիսանի քարոզիչը, որ պատահամբ Ալեքսանտրէթ կը գտնուէր, հանգուցեալին մէկ կարճ կենսագրականը ըրաւ և Վերջին թշնամին մահն է՝ համարին վրայ ծանրանալով շատ գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ: Պատ. Յ. Կիւրլէքեան, Պէյլանի քարոզիչը, որ յատկապէս յուղարկաւորութեան հանդէսին մասնակցելու եկած

էր, Բ. Կորն. 4. 17 և 18 համարներուն վրայ կարճ բայց կռու և իմաստալից կերպով խօսեցաւ: Եկեղեցիի մէջ Նրիցական միսիոնար Տր. Բէնէտիի մաղթանքէն ետքը դագաղը գերեզմանատուն առաջնորդուեցաւ: Հոս՝ Ալեքսանտրէթի քարոզիչը, Պատ. Կ. Գըրգեաշարեան, կը խօսի Յոբ 14. 14 ը բընաբան ընտրելով: ԹՂԹԱԿԻՑ

Պատ. Յ. Կիւրլէքեան Տիկ. մ. Պէզճեանի մասին մեզի զրկած գրութեան մէջ հանգուցեալը կը նկարագրէ իբր եկեղեցասէր, թուրքերու և հայերու հաւասարապէս ծառայող, բնութիւնը, ծաղիկը և մաքուր օդը սիրող, ժրջան և հիւրասէր տանտիկին մը, հաւատարիմ ամուսին մը, և գուրգուրալիւր մայր մը:

ՊԱՏ. Կ. ԳԸՐԳԵԱՇԱՐԵԱՆ, ինչպէս որ գրած էինք, անկուսի մը հետեւանքով ծուռկէն փնասուած ըլլալուն և հիւանդութեան պատճառով 5—6 շաբաթ անկողինը մնացած էր, ուրախ ենք որ բաւականաչափ աղէկցած է, և ցուպի օգնութեամբ եկեղեցի գացած և քարոզած է:

ՄԵԶԻ ՀԱՍԱԾ ընդարձակ տեղեկագրէ մը կը հասկնանք թէ Աթէնքի շրջանի 4 կեդրոններուն և Սելանիկի մէջ այս ամառուան միջոցին Սքուլ ավ Րիլիճընի ուսանողները ամառնային դպրոցներ վարած են մեծ յաջողութեամբ: Տիարք Կ. Թիլֆեան՝ Բոքինիա, Սենքերիմ Սիւլահեան՝ Տէրկութի, Ն. Տէր-Խորէնեան՝ Լիփազմաթա, Ն. Լ. Մելիտոնեան՝ Սինկրու, Մ. Բէօրօղլուեան Սելանիկ աշխատած են: Այս հինգ զբարոցներուն յաճախած են 842 երկսեռ հայ մանուկներ 3—15 տարեկան: Այս զբարոցներուն մէջ աշակերտները սորված են Ս. Գրքէ կտորներ և պատմութիւններ, որոնք յաճախ տրամի վերած-

ուած և բեմադրուած են աշակերտներուն կողմանէ, ամէն պեսակ խաղեր, երգեր, և ձեռագործի շատ մը տեսակները, — կօշիկ նորագել, աղջիկներու կողմէ կարել, պատկերագիրքեր շինել, գծագրել, կողովներ և ուրիշ հետաքրքրական առարկաներ շինել: Բէմքերու վատասերիչ մթնոլորտին մէջ այս զբարոցները մէկ մէկ պզտիկ ուսումնարաններ կ'աւելնեն:

ՀԱԼԷՊԻ Մէջ աղղակի կամ անուղղակի կերպով աւետարանական գործով զբաղող բոլոր հայ և օտար գործիչները Նոյ. Զին հաւաքոյթ մը ունեցան՝ Վեր. Ս. Ս. Մանուկեանի նախաձեռնութեամբ և հրաւերով: 100ի մօտ այրեր և կիներ հաւաքուած էին էմմանուէլ եկեղեցիի վարի սրահը: Վեր. Մանուկեան հաւաքոյթին նպատակին մասին խօսելով ըսաւ թէ աւետարանական գործիչները պէտք է իրարու հետ հաղորդակից ըլլան, աւետարանական գործի մասին պէտք է միասին խորհրդակցին և աղօթեն. հետեւաբար՝ այս նպատակով պէտք կայ ամիսը անգամ մը այսպիսի հաւաքոյթներ ունենալ: Ապա՝ ներկաները հրաւիրեց այս մասին իրենց կարծիքները յայտնելու: Ինը տարբեր անձեր զազափարի արապայտութիւններ ըրին այս մասին: Այս բոլորին իբր արդիւնքը ներկաները յարմար տեսան որ յաջորդ անգամ այսպիսի հաւաքոյթ մը նորէն տեղի ունենայ:

ՊԵՅՐՈՒԹԷ Ետքը Հալէպի մէջ ալ ընտրութիւններու շուրջ համաձայնութիւն գոյացած է: Պիտի ընտրութիւն 22 ներկայացուցիչներ, որոնց 6ը. Իրիք հայ կուսակցութիւններէ, 6ը տեղացի հայերէ, իսկ մնացեալը պիտի բաժնուի հայրենակցական միութեանց միջև:

ՄԱՄԸԼԹԷՅՆԻ ԹՈՒԱԽՏԱՆՈՑԻ իբր խնամատար մարմին ընտրուած են Գեր.

Կարօեան, Գեր. Նազլեան, և Վեր. Ե. Հատրտեան. իսկ իւր Վարչութեան անդամընտրուած են Տօքթ. Եփէնիզօմշուեան, Տօքթ. Գ. Վարդապետեան, Տօքթոր Պէրպէրեան, Տաճատ Նաֆիլեան և Արապեան:

Վեր. Կ. Յարութիւնեան Նոյ. ի ըսկիզբը Հալէպէն մեկնելով այսելից Անտիօքի և Ճարապուլուսի Հայ Աւետ. համայնքները: Անտիօքի մէջ Հայ Աւետարանականները թիւով քիչ և ցրուած են, հետեւաբար չեն կրցած հաւաքական եկեղեցական կեանք ստեղծել: Վեր. Յարութիւնեան տունները զատ զատ այցելած և առիթը ռենցած է Առաք. և Աւետ. հայերէ բաղկացած մեծ հաւաքոյթի մը մէջ խօսելու:

Նոյ. Տիկ կիրակի օրը, Ճարապուլուս գտնուելով՝ երկու պաշտամունքներն ալ ինքը վարած է: Ճարապուլուս արագօրէն կը շէննայ. 1200է աւելի կը հաշուեն տեղւոյս հայ բնակչութիւնը, որուն բոլորն ալ տնտեսապէս անկախ և զոհացուցիչ վիճակ մ'ունին: Հայ Աւետ. դպրոցին մէջ կը դաստիարակուին 60 երկսեռ մանուկներ, որոնց ռեսուցիչներն են վարժուհի մը և Աւետ. եկեղեցիի քարոզիչ Տիար Հապիպ Տարազեան: Քարոզիչը մասնաւորապէս աշխատած է 10 երիտասարդներէ բաղկացած Ե. Ք. Ջանից ընկերութիւն մը կազմելու, և յաջողած է:

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. Հայաստանի բնակչութեան թիւը 1922ին 781,011 էր. իսկ 1931 սեպ. 1ին այդ թիւը եղած է մէկ միլիոն 48292: 1922-26ին բնակչութեան աճումը եղած է 30 առ հազար, իսկ 1926-31ին՝ 38 առ հազար: Բնակչութեան աճումը եթէ ներկայ թափով շարունակէ 18 տարուան միջոցին Հա-

յաստանի բնակչութիւնը պիտի կրկնապատկուի: Երեւանի բնակչութեան թիւը, որ 1926ին 64649 էր, հիմա 95448ի հասած է:

Ներկայիս Հայաստանի մէջ 1252 դպրոցներ, 1213 դպրոցի շէնքեր, 134431 աշակերտներ կան: Երեւանի մէջ տառչին աստիճանի դպրոցներու և եօթնեակներու մէջ 9086 աշակերտներ կան 8—15 տարեկան: 5—6 տարեկաններու համար 36 մանկապարտէզներ, և եօթը տարեկաններու համար 26 առանձին խումբեր կազմուած են:

Տիար Դ. Շահվերտեանի, Հայաստանի կառավարութեան ներգաղթի պաշտօնեայի, Կ. Պոլսոյ «Արեւելք» ի խմբագրութեան ըրած յայտնութիւններուն համեմատ վերջին 8 տարիներու միջոցին Հայաստան տնտեսապէս հսկայ յառաջդիմութիւն ռենցած է: Կառավարութիւնը մշակելի հողերու տարածութիւնը շատցուցած է, շատ մը գործարաններ բացած է, որոնց կարգին են՝ Լենինականի մանածի և հիւսուածեղէնի գործարանը 100,000 իլիկով, Ալլահվէրտի և Ղափանի պղինձահանքերու նոր ձուլարանները, փայտի մըշակման, կահագործութեան, մեքենաշինութեան, կիրի և կրաղիւսի գործարանները և քիմիական ճիւղերի պատրաստող գործարանները: Հայաստան ներկայիս կը շահագործէ 50,000 ձիու ոյժ ելեկտրականութիւն, որ տարեկան 25 միլիոն տոլար հասոյթ կուտայ: Ծրարագրուած է շինարարական ահագին աշխատատանքներ որոնց համար աշխատող ձեռքերու պէտք ունի:

Գեր. Տ. ԹՈՐԳՈՒՄ Արքեպ. Գուշակեան Երուսաղէմի Ս. Յակոբի միաբանութեան կողմէ Պատրիարք ընտրուած էր: Ուրախութեամբ կը հասկնանք որ Անգլիոյ թագաւորը այս ընտրութիւնը հաստատեց է:

ՄԱՐՍԼԵՅԼԻ ՄԷՋ ՏԻԱՐՎ. Խօրատան-
ճեանի բարերարութեամբ շինուած Ս.
Թարգմանչաց եկեղեցիին օծումը և
բացումը կատարուած է Հոկ. 25 ին:

ՆԻԻ ԵՈՐՔԻ ՀԱՅ ԱՌԵՏ. եկեղեցիի
կանանց Օժանդակ ընկերակցութիւնը
հոկ. 16 ին սկսած է իր հաւաքութիւնը
չափքը: Տիկ. Պետիկեան նախագահըն-
տրուած է, Վեր. Պետիկեան խօսած է,
Տիկնայք Ներսէ և Պետիկեան իրենց
գործնական խորհրդակցութիւններով և
Տիկ. Աղաւնի Թէլֆէեան իր ուղերձով
մասնակցած են հաւաքոյթին:

ՏԻԱՐ ՏԻՐԱՆ ԹԷՔԵՍԱՆ, Ֆրանսայի
ծովային սպաներէն, արժանացած է
Պատուոյ Լէգէոնի Ասպետութեան, և այս
առթիւ իր Ֆրանսայի բարեկամները
Մարսէլի մէջ պատուոյ հաւաքոյթ մը
սարքած են:

ԷՋՄԻԱՄՆԻ Կաթողիկոսական ընտ-
րութիւնը յառաջիկայ գարունը պիտի
կատարուի եղեր, Շահվերտեանի յայտ-
նութեան համեմատ:

Ե. Ք. ԶԱՆԻՑԻ ԷՋԸ

ՍԵՂԱՆԻԿԻ Ե. Ք. ԶԱՆԻՑԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբեր 25 ին Աւետարանական Ե-
կեղեցւոյ մէջ Հայ Մշակոյթի Օրը տօ-
նուեցաւ հոծ բազմութեան մը ներկա-
յութեան, նախաձեռնութեամբ եկեղե-
ցիի Միութեան:

Հանդէսը սկսաւ իրիկուան ժամը
8.30 ին և յոտնկայս ռանկնդրուեցաւ
Հելլէն և Հայկական քայլերգները:

Պր. Յ. Քէշիշեան արտասանեց Սիա-
մանթայէն կտոր մը, արժանանալով
ծափերու:

Պատ. Կ. Ֆարաճեան Հայ տառերու

ծագման ու զարգացման շահեկան
պատմութիւնը ըրաւ:

Յայտագրին Բ. մասը սկսաւ կենդա-
նի պատկերով մը որ անակնկալ ծնեղա-
ամէնուն: Ան կը ներկայացնէր Մ.
Մեսրոպի երկնային տեսիլքը: Դերու-
սպիտազգեստ գեղանի հրեշտակներ, ի-
րենց ձեռքը հայ ձայնաւոր տառերը կը-
րող մագաղաթ մը բռնած, երեւցան Մ.
Մեսրոպի, որ ծունկի վրայ եկած էր
խոր մտայնափշտակութեամբ: Ժողո-
վուրդը մինչ այս գեղեցիկ տեսարանը
կը գիտէր, Օր. Ի. Ներկարարեան կը
մօնեցէր «Տէր Կեցոյն»:

Ապա Օր. Հրաչուհի Սէմէրճեան լաւ
առողջանութեամբ յաջող արտասանեց
«Մեսրոպի Մահը» արժանանալով բոլոր
ծափերու: Իսկ Պրն. Ա. Ֆարաճեան
հակիրճ ուսումնասիրութիւն մը կար-
գաց Հին Հելլէն Մշակոյթի վրայ:

Օրուան երկրորդ բանախօսը՝ Պրն.
Կարօ Գէորգեան, որ ժողովրդային ու-
ճով մը խօսեցաւ նիւթ ունենալով «Մը-
շակոյթը իբրեւ ազգապահպան ազդակ»:

Ատաբազարի Հայրց. Միութեան երգ-
չախումբը յաջողապէս երգեց «Ով մե-
ծասքանչ դու լեզու» որմէ ետքը հան-
գիսականները ցրուեցան մեծ գոհունա-
կութեամբ, ապրած ըլլալով խանդա-
վառ միջավայրի մը մէջ մօտ երկու
ժամ:

Ա.Լ.ՊԷՐԹ

ՀԱԼԷՊԻ ԷՄՄԱՆՈՒԷԼ Հայ Աւետ. Ե-
կեղեցիի Ե. Ք. Զանից ընկերութեան
նախաձեռնութեամբ յայտնի Ռուս երա-
ժշտադէտ ջութակահար Միշէլ Պորիսէն-
քօ և իր նուագախումբը Նոյ. 16 ին,
գեղեցիկ նուագահանգէս մը տուին Էմ-
մանուէլ եկեղեցիի վարի արանը: Ժո-
ղովուրդը շատ գնահատեց հանդէսը:
Փափաքելի է որ նման շինիչ և ազնուա-
ցուցիչ հանդէսներ կրկնուին, մեր ժո-
ղովուրդին մշակութային մակարդակը
բարձրացնելու համար:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

Սիրելի եղբայրներ,

Ինչպէս որ արդէն ձեզի ծանօթ է ներքին աւետարանչութեան ելեւմտական տարին Յունվար 1էն կ'սկսի և Դեկ. ին կը վերջանայ: 1931ի միջոցին մեր եկեղեցիներէն շատերը քիչ կամ շատ զուտ մը զրկած են ներքին աւետարանչութեան նպատակով, բայց իր բաժինը լման վճառող գրեթէ չկայ: Ուստի կը խնդրուի որ ամէն եկեղեցի Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսներուն միջոցին իր վերջին ճիգը թափէ: Կը յուսանք թէ այս կերպով կարելի պիտի ըլլայ ներքին աւետարանչութեան տոմարը առանց պարտքի և բացի փակել:

Կը մնանք անկեղծօրէն
(Վեր.) Ա. Ա. Շիրաճեան



Դ Ե Ր Ձ Ա Կ

ՅԱԿՈՐ ՄԻՍԻՐԵԱՆ

ԿԸ ԳՈՀԱՅՆԷ ԱՄԷՆԷՆ

ՆՐԲԱՃԱՇԱԿ ՏԻԿԻՆՆԵՐՆ

ՈՒ ՊԱՐՈՆՆԵՐԸ

ՈՒՆԻ ՆԱԵԻ

ԱՐԴԻԱԿԱՆ ԿԵՐՊՍՆԵՐՈՒ

ՃՈՒ ՄԹԵՐՔ

Վասնիկի անձեռու հետ ամսավնարով
գործառնութիւն կ'ունենանք:

FURST McNESS Ի ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն

ու չինիչ ազդեցութեամբը,

ուստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness cod liver oil extract**Էռչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան իւլ (կենսահիւթ
«Ա» և «Բ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:Մեծապէս ԱՌՈՐԺԱՀԱՄ Է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԿՈՒԺՈՎՑՆԷ:**ՀԱՁ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ**

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
մենթոլ:Բորբոսած եւ գրգռուած կոկորդի քաղանքներու միայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժախմ եւ անուշ է:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԲՈՂՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المسؤول القس ق. هاروثونيان